

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

Գլխավոր համայնքի 2017 – 2021 թթ.

զարգացման ծրագիր

Կազմեց համայնքի ղեկավար, Արմեն Մովսիսյան
հաստատվել է համայնքի ավագանու 09.12.2016թ.

Թիվ 46 – Ն որոշմամբ

2016 թ.

Բովանդակություն

1.	Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3.
2.	Համայնքի իրավիճակի նկարագրություն	4.
2.1.	Համայնքի ընդհանուր նկարագրություն	4.
2.2.	Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	7.
2.3.	Համայնքում իրականացվող ծրագրերը	8.
2.4.	Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	8.
2.5.	Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	10.
2.6.	Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	12.
3.	Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	12.
3.1.	Համայնքի զարգացման տեսլական	12.
3.2.	Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	13.
4.	ՀԶԾ ֆինանսավորում	17.
5.	ՀԶԾ մոնիթորինգ	17.

1. Համայնքի ղեկավարի ողջունի խոսք

Գլաձոր համայնքը Վայոց ձոր մարզի թվով երկրորդ գյուղական համայնքն է՝ ըստ բնակչության թվի /2665 մարդ/:

Բնակչության զբաղվածության հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն է՝ անասնապահության և հողագործության ճյուղերով: Հետևաբար Գլաձոր համայնքի զարգացման իրատեսական ուղղվածությունը հենց դա է հանդիսանում՝ համայնքի առջև դնելով երկու հիմնական նպատակներ.

1. Ինչպե՞ս անել, որ համայնքում գյուղատնտեսությամբ զբաղվածությունը ավելի բարձր եկամուտներ ապահովի:
2. Ի՞նչ անել, որ գյուղատնտեսության ճյուղը Գլաձոր համայնքում առավել արդարացված լինի:

Այս երկու հիմնահարցերը կարգավորելու դեպքում համայնքը կարող է ունենալ մի միջավայր, որտեղ մարդը զբաղվում է գյուղատնտեսությամբ, որը կօգնի ունենալ հավելյալ եկամուտ՝ հոգալու առօրյա խնդիրները և նախադրյալ կլինի լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման համար:

Համայնքի հիմնախնդիրներից են՝

- կիսատ մնացած գազաֆիկացումը, որը կազմում է 1,5 կմ
- համայնքի մշակույթի տան վերանորոգումը /առաջնահերթ տանիքի հիմնանորոգում/
- համայնքում հանդիսությունների սրահի կառուցումը
- ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգումը
- համայնքում ճահճացած 32 հա հողերի դրենաժի կառուցումը
- համայնքում խմելու ջրի ներքին ցանցի մասնակի հիմնանորոգումը
- համայնքում կամուրջների վերանորոգումը
- համայնքում կոյուղու կառուցումը
- համայնքում աշխատատեղերի ստեղծումը

Ֆինանսական միջոցների սղության պատճառով՝ համայնքի առջև ծառայած շատ խնդիրներ, ժամանակին չլուծելու դեպքում, դառնում են հիմնախնդիրներ:

Այս հիմնախնդիրների լուծումը ուղղակի ձևով բերում է համայնքի սեփական եկամուտների ավելացմանը, որը կնպաստի սեփական հիմնախնդիրները լուծել ավելի հեշտ ճանապարհով:

Համայնքն այժմ համագործակցում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ – ի հետ՝ չինայելով ջանքեր այդ համագործակցության շրջանակները մեծացնելու ուղղությամբ և «Ֆուլեր» տնաշինական կազմակերպության հետ՝ արոտավայրերում անասունների խմոցների տեղադրման վերաբերյալ:

2 Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

ՀՀ Վայոց ձոր մարզի Գլաձոր համայնքը, նախկին <<Օրթաբենդր>>, հիմնադրվել է 1828 թվականին Պարսկաստանի Խոյ և Սալմաստ Գավառներից ներգաղթած մարդկանց կողմից: Այդ ժամանակ գյուղն ունեցել է 128 բնակիչ: 1946 թ – ին գյուղը վերանվանվել է Գլաձոր:

Գլաձոր համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում: Եղեգնաձոր քաղաքից գտնվում է մոտ 3 կմ. հյուսիս:

Մայրաքաղաք Երևանից ունի 120 կմ. հեռավորություն, ծովի մակարդակից բարձր է 1350 մ. :

Կլիման մերձարևադարձային է, չոր ցամաքային, ամռանը շոգ է, ձմռանը՝ ցուրտ: Տարեկան տեղումների քանակը 300-350 մմ. :

Համայնքի վարչական տարածքը կազմում է 4673.0 հա , բնակչության թիվը 01.01.2016 թ. դրությամբ 2665 է, այդ թվում՝ տղամարդիկ՝ 1358, կանայք՝ 1307:

Տնտեսությունների թիվը կազմում է 712:

Համայնքում փախստականներ չեն բնակվում:

Համայնքի բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ, այստեղ կլիման նպաստավոր է այգեգործության և խաղողագործության համար: Վերջին տարիներին համայնքում բավարար հիմքերի վրա է դրված խմելու և ոռոգման ջրերի սպասարկումը:

Գլաձոր համայնքն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց, գրադարան, գործող 11 առևտրի կետեր:

Համայնքը գրեթե գազաֆիկացված է:

Համայնքի տնտեսությունների 30 % - ը օգտվում է կոմունիկացիայից:


Էականորեն բարելավվել են համայնքի բնակիչների կուլտուր - կենցաղային պայմանները:

Համայնքի տարածքում են գտնվում մի շարք պատմամշակութային կոթողներ՝ Սպիտակավոր վանական համալիրը /կառուցվել է 13 – րդ դարում Պռոշյանների հովանավորությամբ/:



80 - ական թվականներին հուշարձանի տարածքում է ամփոփվել հայ պետական, ռազմական գործիչ, քաղաքագետ - իմաստասեր Գարեգին Նժդեհի աճյունի մի մասը, որն այնտեղ է հասել նրա եղբոր և մի խումբ նվիրյալների ջանքերով՝ հաշվի առնելով զորավարի ցանկությունը:

Համայնքի տարածքում են գտնվում նաև Պռոշաբերդը, «Սուրբ Հակոբ» /«Սուրբ Խաչ»/ եկեղեցին, որը կառուցվել է 18-րդ դարում, գործող եղեկեցի է, վերանորոգվել է 2010 – 2011 թթ., բազմաթիվ մատուռներ և խաչքարեր:

Գծապատկեր 1



Գծապատկեր 2



2.2. Համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակը

2017 թ. տարեկան բյուջեն կազմում է 64.931 մլն դրամ, որից 14.150 մլն դրամը /22 %/ կազմում են սեփական եկամուտները, իսկ 50.781 մլն դրամը՝ /78 %/ դոտացիան:

Համայնքում գործունեություն են իրականացնում 11 անհատ ձեռներեցներ /դեղատուն, վարսավիրանոց, սննդի և հագուստի խանութներ, մսի վաճառքի կետ, տեխ. սպասարկման կետ/, ինչպես նաև 5 ինքնազբաղ մարդիկ:

Համայնքում, որպես գյուղ. մթերք, հիմնականում արտադրվում է ծիրան, խաղող, խնձոր, ընկույզ:

Այժմ համայնքը համագործակցում է մի գյուղատնտեսական կազմակերպության հետ, որի ծրագրի միջոցով հնարավոր է համայնքում զբաղվել հնդկաձավարի արտադրությամբ: Գյուղ. մթերքը իրացվում է հիմնականում մարզային և ոչ հաճախ մայրաքաղաքի շուկաներում:

Համայնքն ունի զբոսաշրջության մեծ ներուժ՝ կապված «Սպիտակավոր» վանական համալիրի, Պոռշաբերդի և բազմաթիվ խաչքարերի և գերեզմանների հետ:

Ներկայումս աշխատանքներ են տարվում հյուրանոցային ենթակառուցվածքներ ստեղծելու ուղղությամբ:

Համայնքն ունի միջնակարգ դպրոց, որտեղ այս պահին ուսանում են 236 աշակերտներ, մանկապարտեզ, որտեղ հաճախում են 98 երեխաներ մեր և հարևան համայնքներից:

Համայնքում գործում է բուժ. կետ՝ իր երկու բուժ. աշխատողներով, որոնք սպասարկում են համայնքին:

Համայնքում կան 110 նպաստառուներ:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

Առաջիկայում համայնքը պատրաստվում է համագործակցել ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ՝ համայնքի տարածքում փոքրիկ կարի արտադրամաս գործարկելու ուղղությամբ: Դրա արդյունքում ստեղծված շուրջ 20 – 25 աշխատատեղերը իրենց դրական ազդեցությունը կունենան հավելյալ արժեք ստեղծելու գործում:

Համայնքն սկսել է համագործակցել «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ – ի հետ՝ որի արդյունքում գյուղատնտեսությամբ զբաղվողները չեն ունենա ոռոգման աջակցության պակաս:


Համագործակցություն կա նաև «Ֆուլլեր» տնաշինական կազմակերպության հետ՝ արոտավայրերում անասունների խմոցների տեղադրման վերաբերյալ:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

Համայնքային բյուջետային եկամուտները գոյանում են հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից, վարձակալության վճարներից և ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներից:


Սեփական միջոցները կազմում են համայնքային բյուջեի շուրջ մեկ քարրորդ մասը, բայց տարեցտարի աճի տեմպերը է նկատվում:

Ստորև ներկայացվում է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները՝ 2013 – 2017 թթ.



2017 թ. կանխատեսվել է սեփական եկամուտների շուրջ 20 % աճ:

Համայնքի 2013 – 2016 թթ. ծախսերի և եկամուտների դինամիկան:



Ուսումնասիրելով վիճակագրությունը՝ պարզվում է, որ ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներն ունեն աճի միտում, և 2017 թ – ի միջոցներն ավելի արդյունավետ օգտագործման դեպքում համայնքը հնարավորություն է ունենում լուծելու էլ ավելի ծախսատար խնդիրներ:

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Զարգացման խոչընդոտ է հանդիսանում համայնքային բնակչության ինքնազբաղվածության, զբաղվածության արդյունքում ոչ բավարար եկամուտների ստացումը, որն էլ իր հերթին տանում է արտագաղթի աճի:


Այս համատեքստում երևում է համայնքի առջև ծառայած մնացյալ խնդիրների աստիճանական լուծումը / խոսքը ենթակառուցվածքների և կենսական պայմանների

հրապուրիչ դարձնելու ապրելու և արարելու համար:

Վերը նշված ծրագրերի իրականացումը համայնքը տեսնում է արդյունավետ կառավարման, ՀՀ կառավարության և այլ կառույցների ու անհատների աջակցությունը օգտագործելու մեջ:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և

սպառնալիքների (ՈՒԹՀՄ) վերլուծություն



3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է առաջիկա տարիների համար հիմնախնդիրների աստիճանական լուծման , գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման ուղիով ունենալ էլ ավելի զարգացած ենթակառուցվածքներով, ապագայի հանդեպ մեծ հույսով և տեղական կառավարման հանդեպ հավատով բարեկարգ համայնք:

Համայնքի առջև ծառայած խնդիրների, դրանց լուծման հետ կապված պատկերացումների և հնարավորինս ճշգրիտ ժամանակային առաջնահերթությամբ մանրամասն նկարագիրը կներկայացվի հաջորդ բաժնում:

3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների և խնդիրների հնարավորինս հակիրճ ձևակերպումը, դրանց լուծման ուղիները՝ ըստ ոլորտների:

Ծրագիր 1 Աշխատատեղերի ստեղծում.

Նոր աշխատատեղերի ստեղծման գաղափարը կապված է փոքրիկ կարի արտադրամասի գործարկման հետ, որը, ինչպես արդեն նշվել է, իր լրացուցիչ դրական ազդեցությունը կունենա ոչ միայն համայնքի, այլ նաև երկրի տնտեսական վիճակի վրա: Խոսքը գնում է 20 - 25 աշխատատեղերով փոքր ձեռնարկության մասին, որը արտադրելու է կանխատեսումային աճող գյուղատնտեսության ոլորտին անհրաժեշտ պարկեր, ձեռնոցներ, հանդերձանք և այլն:

Համայնքն ունի համապատասխան շինություն և պատրաստակամություն համագործակցելու և իր ներդրումն ունենալու այդ գործում:

Ըստ նախնական հաշվարկների՝ անհրաժեշտ է 50 – 60 մլն դրամի ներդրում, իսկ այդ ներդրման հավանական տարբերակը համայնքը տեսնում է կամ ՀՀ կառավարության, կամ նրա աջակցությամբ՝ ուրիշ ծրագրերի մեջ:

Այս բիզնես ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 - 2018 թթ.:

Ծրագիր 2 Գազաֆիկացում.

Համայնքում մնացել է իրականացնել շուրջ 70 տնտեսությունների /1.5 կմ երկարությամբ/ գազատարի շինարարություն, որի արդյունքում համայնքը կունենա

100 % - ոց գազամատակարարում: Չգազաֆիկացված տնտեսությունները ստիպված են առանց այդ էլիրենց սուղ միջոցներից վճարել հեղուկ գազի և էլեկտրոէներգիայի համար:

Նախնական հաշվարկներով անհրաժեշտ է 10 մլն դրամի ներդրում / գազատարը կառուցվելու է 55 մմ տրամագիծ ունեցող խողովակով/: Այդ գումարի շուրջ 2 մլն դրամը կարող է տրամադրել համայնքապետարանը:

Ծրագիր 3 Մշակույթի տան վերանորոգում.

Այս ծրագիրը համայնքի ամենածախսատար, բայց միևնույն ժամանակ շատ անհրաժեշտ ծրագրերից է: Անհրաժեշտություն կա շատ արագ վերանորոգել գոնե տանիքը, շենքի հատագա էլ ավելի վատ վիճակից և հետևաբար ծախսերից խուսափելու համար :

Այնտեղ գործել են իմբակներ, գրադարան, կազմակերպել են մշակութային միջոցառումներ: Վերանորոգելով այն՝ համայնքը նպատակ ունի ակտիվացնելու համայնքային մշակութային կյանքը, և լրացուցիչ ևս մի գործոնով կանխելու արտագաղթը համայնքից:

Համայնքը պատրաստ է ներդնել շուրջ 3.5 մլն դրամ 2017 – 2018 թթ. Հանար:

Ծրագիր 4 Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում.

Կամուրջների, ճանապարհների անբարեկարգ վիճակը ամենօրյա խնդիր է դարձել բնակչության համար: Շատ դեպքերում դրանք ոչ թե դժվար անցանելի են, այլ անանցանելի, դրանով իսկ լրացուցիչ դժվարություններ են առաջացնում բնակչության համար՝ գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքում: Աշխատանքների մեկնարկը արդեն տրված է: Լրիվ բարեկարգման համար մախնական գնահատմամբ անհրաժեշտ է մոտ 8 մլն դրամ, որը համայնքը նախատեսում է այդ գումարը տրամադրել առաջիկա տարիներին մաս-մաս :

Համայնքում անհրաժեշտություն կա վերանորոգելու Սկոդունք գետի կամուրջը, որը 1

մին դրամի ներդրում է պահանջում:

Օրագիր 5 Ջրամատակարարման բարելավում .

ԻՖՄԴ ծրագրով հիմնանորոգվել է համայնքի 13.5 կմ երկարությամբ խմելու ջրի համակարգը (որտեղ ևս համայնքը ունի շուրջ 25 մլն դրամ համաֆինանսավորման խնդիր), մնացյալ մոտ 2.5 կմ երկարությամբ ջրագծի հիմնանորոգումը դարձել է շատ լուրջ խնդիր համայնքի շուրջօրյա ջրամատակարարման պոտենցիալը օգտագործելու ճանապարհին:

Որի համար անհրաժեշտ է շուրջ 10 -12 մլն դրամի ներդրում:

Օրագիր 6 Դրենաժային աշխատանքների կատարում .

Համայնքի շուրջ 30 հա սեփականաշնորհված և 2 հա տնամերձ հողատարածքները մշակության պիտանի դարձնելու համար անհրաժեշտ է դրենաժ կառուցել:

Համայնքի բնակչությունը պատրաստակամ է աջակցել այս գործին:

Օրագիր 7 Ջրոսաշրջության զարգացում .

Համայնքի տարածքում են գտնվում բազմաթիվ պատմամշակութային կոթողներ՝ 13 –րդ դարում կառուցված «Մպիտակավոր» վանական համալիրը: Վանքը շրջապատող պարիսպը կիսավեր է. բակում մնում են բազմաթիվ վանական խցերի և կենցաղային շենքերի ավերված հիմնապատեր:

1987թ-ից եկեղեցու արևմտյան պատի տակ ամփոփված են Գարեգին Նժդեհի մասունքները:

Մպիտակավոր ս. Աստվածածնի վանքը նշանավոր է նաև նրանով, որ Գլաձորի դպրոցի

գործունեության խափանումից հետո դարձավ Պոռշյանների տիրույթի մտավոր կենտրոնը Վայոց ձորում: Այստեղի դպրոցը երկար ժամանակ պահպանեց իր գոյությունը. 15-րդ դարի երկրորդ կեսում հատկապես նշանավոր էր վանքի առաջնորդ և ուսուցիչ Ավագուտը՝ բանասեր՝ վարդապետը, որից մնացել են մի քանի ձեռագրեր:

Վայոց Ձորի մարզի Վերնաշեն գյուղից 7կմ դեպի արևելք գտնվում է Արկազի Ս.Խաչ վանքը, որը Վայոց Ձորի նշանավոր ուխտատեղի է և հիշատակվում է VIII դարից: Վանքի ներկայիս եկեղեցին հիմնովին վերաշինվել է 1870-1871թթ.-ին:

Եկեղեցու հարավ-արևելյան ավանդատանը թաղված է Հիսուսի խաչելության փայտի մի կտորը, այդ պատճառով էլ վանքը կոչվում է Սուրբ Խաչ:

Տարածքը տեսարժան է նաև բազմաթիվ հետաքրքիր գարդանախշերով խաչքարերով:

Ծրագիր 8 Կոյուղու կառուցում

Համայնքի մի քանի թաղամասերում գործում է կոյուղի: Բնակչության բարեկեցությանը նպաստելու՝ կենցաղային պայմանները բարելավելու նպատակով, ցանկալի է համայնքի որոշ թաղամասերում ևս կառուցել կոյուղի:

Ծրագիր 9 Աղբահանության կազմակերպում

Այս պահին համայնքում կատարվում է սիստեմատիկ աղբահանություն: Սակայն, համայնքում սանիտարական վիճակը էլ ավելի բարելավելու համար, նպատակահարմար է թաղամասերում տեղադրել աղբարկղեր:

Ծրագիր 10 Հանդիսությունների սրահի կառուցում

Մեր ժամանակներում շատ համայնքներում կառուցվել և գործում են

4. ՀԶԾ ՏԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017-2021 թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի և աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներհծգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,

- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1

<< Մ Ա Ք Ր Ա Կ Ա Ր >>

Վայոց ձոր մարզի Գլածոր համայնքում գյուղատնտեսական և բանվորական
հանդերձանքի և օժանդակ պարագաների կարի
արտադրամաս-ձեռնարկության հիմնման

Ներկայացվում է
Գլածորի համայնքապետարանի կողմից

Վայոց ձոր մարզ
Գլածոր համայնք
2016 թ.

ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ և ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Այսօր Հայաստանի, հատկապես գյուղական համայնքների ազգաբնակչությունը, ելնելով սոցիալ-տնտեսական պայմաններից և սեփական տնտեսության աշխատանքային և տնտեսական ռեսուրսների հաշվին, ընտանեկան հոգսերը հոգալու անհրաժեշտությունից, իրագործում է բազմաբնույթ, բազմապրոֆիլ, իսկ գյուղական վայրերում, տեղին բնորոշ գյուղատնտեսական աշխատանքներ և ծառայություններ, որոնց իրագործման գործընթացում անհրաժեշտ են համապատասխան հանդերձավորում և օժանդակ պարագաներ:

Նմանատիպ հանդերձանք և օժանդակ նյութեր այսօր հիմնականում ներկրվում են արտերկրից և վաճառվում ինքնարժեքից շատ ավելի թանկ գնով, որը հաճախ հասու չէ գյուղաբնակներին: Ելնելով սույն փաստից՝ ծրագիրն առաջարկում է գյուղական համայնքներում, հիմնվելով տեղի մասնագիտական ռեսուրսների վրա, օգտագործելով համեմատաբար էժան հումք, հիմնել կարի փոքր արտադրամաս - ձեռնարկություններ, որոնց արտադրատեսակները կարող են լինել

- Տարաբնույթ գյուղատնտեսական աշխատանքների հարմարեցված արտահագուստներ, կոմբինիզոններ և այլն
- Արևապաշտպան գլխարկներ, ձեռնոցներ, դիմակներ
- Բերքի և սերմերի պահպանման պարկեր, այլ տարաներ
- Մեքենաների և գործիքների չեխուլներ
- Կտորե և քաթանե երիզակներ և այլն

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ

- Նոր աշխատատեղերի ստեղծումը
- Գյուղական տնտեսությունների ծախսերի նվազեցումը
- Գյուղական ազգաբնակչության աշխատանքային պայմանների հեշտացումը
- Համայնքային բյուջերի հարստացումը

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ

- Համապատասխան շենքայի տարածք (նորակառույց կամ վարձակալած)
- Կարի մեքենաներ և օժանդակ տեխնիկական սարքավորումներ, միջոցներ
- Կոմունիկացիոն համակարգեր
- Կազմակերպչական և տեխնիկական անձնակազմ (ընդամենը 20 մարդ)

Շենքային պայմանների ապահովման համար կարելի է օգտագործել համայնքի տարածքում նախկինում գործած պետական, արդեն մասնավորեցված հիմնարկ - ձեռնարկությունների շինությունները և կառույցները:

<< Մ Ա Ք Ր Ա Կ Ա Ր >>

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների

ՆԱԽԱՀԱՇԻՎ

(Ծախսային մաս)

N	Ծախսի տեսակը	Անհրաժեշտ գումարը /<< դրամ/
1	Շենքի վարձակալման գումար	2 000 000
2	Կոմունալ ծախսերի վճարներ	4 000 000
3	Կարի մեքենաների և սարքավորումների գնման գումար	20 000 000
4	Աշխատակազմի վարձատրման գումար 20 մարդ X 150000 X 12 ամիս	36 000 000
5	Գովազդային, գրասենյակային և այլ ծախսեր	5 000 000
	Ընդամենը ողջ ծախսը՝ Շենքի վարձակալման դեպքում	67 000 000

Ծրագրի հեղինակները համոզված են, որ ծրագրի իրագործման դեպքում կստեղծվի ևս մի նախապայման գյուղական համայնքների ազգաբնակչության ապրուստի և աշխատանքի պայմանների հեշտացման և համայնքային կյանքի խթանման համար:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 2

«Գլածոր համայնքի գազաֆիկացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում կիսատ մնացած թվով 70 տնտեսությունների գազաֆիկացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Բնակիչների բավարարվածություն գազի մատակարարումից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Գազատարի կառուցում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առակ է	Առակ է	Առակ է	Առակ է	Առակ է
	2. Բերքատվության աճ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
2		2	5	5	5	5	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Գազաֆիկացման նախագծային աշխատանքներ</p> <p>1.2. Գազատարի կառուցում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Գյուղատնտեսական կուլտուրաների մշակման ագրոտեխնիկական կանոնների ծանոթացում</p> <p>2.2. Հողերի ճիշտ մշակման, պարարտացման կանոնների ծանոթացում</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 1.0 մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 9.0 մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 10.0 մլն դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Սյունիք համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Գլածոր համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017 թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը հնարավորություն կտա համայնքի բնակչությանը /թվով 70 տնտեսությունների/ ապահովել բնական գազով և համայնքի ողջ բնակչության համար ստեղծել հավասար կենսապայմաններ:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 3

«Գլածոր համայնքում մշակույթի տան վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակիչների ազատ ժամանցի					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի բնակիչների ազատ ժամանցի կազմակերպում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Գլածոր համայնքում մշակույթի տան վերանորոգում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
2.						
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. համայնքում մշակույթի տան վերանորոգում</p> <p>1.2. բնակիչների ազատ ժամանցի կազմակերպում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1.</p> <p>2.2.</p>					
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 1.0 մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 39.0 մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 40 մլն դրամ</p>					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Գլածոր համայնքը ունի:					
Ծրագրի հիմնական շահառուները	Սյունիք համայնքի երիտասարդներ և երեխաներ:					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018 և 2019թ.					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է համայնքում մշակույթի տան վերանորոգում՝ դարձնելով հանգստի, ժամանցի, երիտասարդական միջոցառումների կազմակերպման համայնքային կենտրոն:					

Ծ Ր Ա Պ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Պ Ի Ր N 4

«Գլածոր համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի ենթակառուցվածքային տակ գտնվող ճանապարհների խճապատում և բարեկարգում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
0	0	2	2	2	5		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված ճանապարհ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2. Բնակիչների բավարարվածություն հասարակական տրանսպորտի աշխատանքից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. բարեկարգում 10 կմ</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ</p> <p>2.2.</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 7.5մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 8 մլն դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Գլածոր համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Դիցմայրի բնակավայրի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է բարեկարգել Գլածոր համայնքի ներհամայնքային ճանապարհները՝ մոտ 10 կմ:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 5

«Գլածոր համայնքի խմելու ջրագծի մասնակի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը խթանում									
Ծրագրի անմիջական նպատակ	Բնակիչների բավարարվածություն խմելու ջրի մատակարարումից									
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ							
		2016					2017	2018	2019	2020
Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	բավ	բավ				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Զրագծի կառուցում									
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ							
		2016					2017	2018	2019	2020
	Առկա չէ	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է			
	2. Բնակիչների բավարարվածություն խմելու ջրի մատակարարումից									
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ								
	2016					2017	2018	2019	2020	2021
Հիմն. բավ	Հիմն. բավ					Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	բավ	բավ
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Խմելու ջրի ցանցի կառուցման նախագծային աշխատանքներ</p> <p>1.2. Խմելու ջրագծի կառուցում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ</p> <p>2.2.</p>									
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 13.5 մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 14.5 մլն դրամ</p>									
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում									
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Սյունիք համայնքը ունի:									
Ծրագրի հիմնական շահառուները	Դիցմայրի բնակավայրի բնակիչներ									
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ.									
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը հնարավորություն կտա խմելու ջրով ապահովել Սիզնակ բնակավայրը՝ միաժամանակ լուծելով համայնքի բնակավայրերի միջև զարգացման տարբերությունները և ապրելու հավասար կենսապայմանները:									

